Ա. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1898 — ԹԻՒ 74

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք եւ չեն տրուիր

—)(—

Ծանուցման տողը 20 սանթիմ է. Լրիւին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը շնորհուի։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

R. P. Kalémkarian
(Autriche)
Mechitharistangasse W. 4
Vienne

Դատակ եւ դրամ դրկել

Խմբագրութեան հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: А. Сукясовъ.

ՄԻԱՅՆ ՄԱՏՆԻՉԸ ՉԷ ԴԱՒԱՃԱՆ

—:—

Մեր ժողովուրդի մեծ մասը դաւաճանութիւն խօսքը շատ նեղ իմաստով է ըմբռնում, այդ պատճառով էլ մեղանում դաւաճան մակդիրը տրվում է միայն նրանց՝ ովքեր որ եւ է հայի կամ յեղափոխականի մատնել են թշնամի կառավարութեան։ Այս ապացուցանում է թէ հայ ժողովուրդը այնքան սահմանափակ դաղափար ունի քաղաքացիական բարոյականութեան մասին, որ չի հասկանում թէ բացի ընկերին դաւաճանելուց, կայ եւ հասարակական փայփայած իդէալների ու սկզբունքների դաւաճանութիւն, որը աւելի պախարակելի եւ աւելի վնասակար է, քան առաջինը։

Հայ ժողովուրդը չէ հասկանում եւ այն, որ մտաւոր ու բարոյական արժանաւորութիւնները բոլորովին տարբեր բաներ են, որ մարդ կարող է լինել խելացի, գիտուն եւ զարգացած, բայց եւ այնպէս անբարոյական հրէշ՝ ընդունակ թէ ընկերոջը եւ թէ մարդկային ամենավսեմ իդէալներին դաւաճանելու։ Չէ ըմբռնում նոյնպէս որ տարիներով ազգասիրական ոգով դրող եւ քարոզողն էլ կարող է, կեանքը վտանգված միջոցին, բարոյապէս ընկնել, լիզել իրան հարվածող ձեռքը, յիմարութիւն անուանել իր տարիներով քարոզածը, թքել իր եւ ժողովրդի իդէալների վրա եւ մի խօսքով դաւաճանել ամեն սրբութիւն, լոկ իր կորցրած հանգստութիւնը գտնելու համար։

Որ ժողովուրդը այդպէս է ըմբռնում եւ չէ կարողանում խորը թափանցել այդ երեւութիւնների մէջ՝ շատ բնական է, բայց զըզվելի եւ արդահատելի են նրանք, ովքեր աշխատում են ժողովրդի միտքը աւելի շփոթել, որ կարողանան պաշտպանել մեր այն յեղափոխականներին ու գործիչներին, որոնք ապահով վիճակում աշխատել են ազգի համար, բայց հէնց որ կեանքները վտանգվել է, ուրացել են իրանց քարոզածը, դաւաճանել հանրային իդէալներին՝ մեղայի չոգելով Սուլթանների առաջ։ Եւ, այդ ամօթալի քայլը արդարացնելու մտքով, տարածել։ այդ զիջումը ըրինք, ապագայում ազգի փրկութեան գործին նորէն ծառայելու համար։

Մենք չեշտում ենք որ բարոյական սկզբունքներին եւ ժողովրդային վսեմ իդէալներին դաւաճանողը. նրանց նոյն իսկ մի վայրկեան ուրացողը եւ ապտոտողը, աւելի վնասակար եւ մեծ դաւաճան է, քան սոսկ անհատին մատնողը, մանաւանդ երբ սկզբունքի դաւաճանը տարիներով քարոզել է եւ պաշտպան հանդիսացել իր ոտի տակ տուած սկզբունքներին ու իդէալներին, որոշ տարրի վրա ազդեցութիւն գործել եւ այդ ստորացնող քայլը անում է միայն իրան ազատելու միտումով։

Այդպիսի անհատը իր դաւաճանութեամբ եւ բարոյական անկումով կարող է մի ամբողջ տարրի համար վատ եւ վարակիչ օրինակ լինել, ուրեմն աւելի արժանի է արհամարվելու եւ պատժվելու։

Անհերքելի ճշմարտութիւն է, որ ոչ մի բռնաւոր իր բանտով, տանջանքներով եւ կախաղաններով չէ կարող ընկճել անկեղծ եւ անձնուրաց զաղափարական ազատին։ Ճշմարտութիւն է եւ այն, որ զաղափարական անկեղծ կըռուողը չի լիզում բռնաւորի ոտքերը իր կեանքը փրկելու համար։ Ընդհակառակը այդպիսիները թէ բանտում, թէ կրակի մէջ եւ թէ կախաղանի վրա, երբ ծածկելու եւ թաղցնելու պէտք չէ մնացել, ժողովրդի բացարձակ ըղձքի մարմնացումն են ներկայացնում բռնաւորների առաջ։ Եւ, ահա դրանք են քաջութեան, անձնազոհութեան կենսական սերմերը ցանում ժողովրդի մտքում եւ զգայուն տարրի սրտում եւ անձնազոհների լեգէոններ ստեղծում ժողովրդական կռիւները առաջնորդելու եւ ազատական ձգտումները իրագործելու համար։

Եթէ աշխարհում չը տանջվէին եւ չը հալածվէին Սաւանարոլ, Հուսս, Բրունո, Գարիբալդի, Մաձզինի, Լուտէր, Վոլտեր, Միլնցէր, Կարլշտատ, Բոնիվար եւ ուրիշ շատերը, այլ ընկճվէին թագաւորներից եւ պապերից, իրանց քարոզած գաղափարներին դաւաճանէին միայն իրանց կեանքը փրկելու նպատակով, այսօր մարդկութիւնը կը ճգմվէր կայսրների եւ պապերի ճիրաններում, իսկ վերոյիշեալ պաշտելի անձնուրաց անհատները դաւաճան կը համարվէին, չը նայելով որ մինչեւ վատնդված օրերը, շատ օգտակար էին եղել իրանց ժողովրդներին։

Եթէ Քրիստոս խաչի վրա չը մնռնէր, այլ իր կեանքը փրկելու համար իր քարոզած սկզբունքներին դաւաճանէր, զիջանելով իրան հալածողներին, Աստուած չէր համարվի եւ այսօր Քրիստոնէութիւնը գոյութիւն չէր ունենայ։

ՎԱՐԴՈ

ԴԱՏԸ

—

Անցեալ Գշ. օր տեղի ունեցաւ, «Հայ դաւաճան մը» յօդուածին առթիւ, «Շարժումի» նախկին պատասխանատու Պ. Դ. Թահմիզեանի դէմ բացուած դատը եւ այս վերջինը երկու դատի փոխարէն՝ այն է Ճգնաւորեանի եւ «Տաւրոսի» դատապարտուեցաւ 2 օրուան բանտարկութեան եւ 20 ֆր. տուգանքի, պատիժ՝ որ ներուեցաւ իրեն Ճգնաւորեանի կողմէ։

Ինչպէս մեր ընթերցողները գիտեն, Պ. Թահմիզեան, վերոյիշեալ յօդուածը «Շարժումի» մէջ երեւալուն պէս, առանց այլեւայլութեան, եւ միայն ինքզինքը զործին մէջէն հանելու տենչով՝ ամէն բան ինքիրզլխուն հերքած եւ հրապարակաւ ներողութիւն խնդրած էր դատ բացողներէն։

Բայց այս վերջինները, փոխանակ տրուած գոհացումով բաւականանալու, ինչպէս որ կը պահանջէր տղնութիւնը եւ ամենէն տարրական ողջմտութիւնը, անպատճառ անմեղ մը պատժել տալու վայրենի այլ գիւրահասկանալի քմահաճոյքներով անշարժ մնացին, մերժելով խըմբագրութեանս առաջարկած գիրութիւնները, որով դատը կարելի պիտի ըլլար մեր վրայ փոխանցել եւ օրինաւորապէս զբաղիլ անով։

Աւելորդ է ըսել թէ այս դատապարտութիւնը ոեւէ նշանակութիւն չունի «Հայ դաւաճան մը» յօդուածին իրաւացի կամ անիրաւ ըլլալուն տեսակէտով։

Եւրիշ բան էր եթէ Պ. Թահմիզեան իբր «պատասխանատու» ներկայանար եւ՝ իր փատերը անբաւական համարելով՝ դատապարտուէր։

Հետեւաբար բուն դատը տեսնուած չէ, եւ կը մնայ հոն՝ ուր որ էր առաջին օրը։

Իրողութիւնը սա է թէ «Սիլա»է արատապուած հեռեւեալ լրտեսական նամակը միշտ լենդանի կը մնայ եւ ահռելի ուրուականի մը պէս անկուած է հասարակութեան առջեւ։

Այսպէս թէ այնպէս, կը պահանջենք Պ. Ճգնաւորեանէ որ վերջայ մեզ լուսաբանել թէ ի՞նչպէս կըլլայ որ իր անունը լրտեսական նամակի մը մէջ կերեւայ։ Ի՞նչպէս կըլլայ որ իսկոյն ձերբակալել չտար Ֆր. Ֆ.ն, լրտեսական նամակին հեղինակը որ երեք ամիս Վառնայի մէջ թափառելէ եւ քը դատը բացուելու թուականին մօտ կառնէ կը քալէ։

(Առանց օրկոմոնիկի մասնակցութեան)

Խմբագրութիւն

ԱՀԱ ԼՐՏԵՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

—

Թարգ. զերմաներէն բնագրէն

Տիկին,

Մինչեւ այսօր իմ նամակին չը պատասխանեցիք, եւ կը տարակուսիմ։ Դէթ հաճեցէք ինձի դրկել անցագիրս, որուն շատ պէտք ունիմ։

Բիֆաթին ըսեր էք որ ես իբրեւ օրագրող 3,000 ֆր. կը շահիմ, բայց ասիկա լաւ բան չէ, որովհետեւ ես փարամը իսկ չունիմ։ Կը պահանջեմ 50 լիրա յանձնելու համար Պոլիս հասնող անձին անունը։ Ինչո՞ւ ձրիապէս աշխատիմ։ Գրեցէք ինձի նաեւ Գաթիի մասին տեղեկութիւններ. խնդրեմ չանցցէք որ Թուրքերը շուտով այդ անձին անունը իմանան։ ԵՑՆ ՀԱՅԸ ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ԿԱՐՈՂ Է ԼՌԵՑՆԵԼ ԿԸ ՊՕՂՈՒԻ ՏԻԳՐԱՆ ՃԳՆԱՒՈՐԵԱՆ։

Խնդրեմ հոգ տարէք որ շուտով սատակ ձեռք բերեմ։ Հարգալից ողջոյններ։

Ձերդ.
Ֆր. Ֆ.

——)·(——

ԽԱՐԱԶԱՆԻՆ ՏԱԿ

—

Այլ եւս անցած են այն ժամանակները (ամիս մը չկայ դեռ եւս) երբ Սուլթանը, հայկական ջարդերուն առթիւ իրենց հպատակներուն կրած վնասներուն հատուցումը պահանջելու համար՝ պետութեանց տուած ծանուցագրին՝ յանդգնութեամբ կը պատասխանէր.

—Հայերուն դիմեցէք, տնոնք են սպանութիւններուն պատճառը։

Հիմա, հլութեամբ գլուխ կը կախէ քառեակ համաձայնութեան սպառնալիքին առջեւ, եւ իր «դաշնակցութիւնը» Քայզէրին հետ չի զօրեր զինքը ազատելու իր վնասութենէն։ Փորձեց ուելի մեղմ միջոցներով կուլ տալ Եւրոպայի իր վրայ դրած ծանր ճնշումները, եւ իր կարգին խաբել իր ժողովուրդը քանի մը թեթեւ փոփոխութիւններ մացնելով զինքը հարուածող վերջնագրին մէջ։

«Չէ՛» պատասխանեցին կարուկ կերպով Ֆրանսա, Ռուսիա, Անգլիա եւ Իտալիա։

Եւ Կրէտէի ամրողջական պարպումը քանի մը օրուան գործ է միայն։

Ասիկա, յոյժ չնչաղրգռական է մեզ, հայերուս համար, որովհետեւ կարգը մերն է. կարգը ամէն անոնց որ այնքան խորին կերպով կը տառապին Սուլթանի բռնակալութենէն։ Կրէտական խնդիրը անգամ մը լուծուած, ինքնավարութիւնը իրողութիւն մը դարձած՝ ասպարէզը ազատ պիտի մնայ բարենորոգումներու խնդրին։ Բայց ոչպէս խոստացած են մեզ զանոնք։ Անհնարին է որ եւրոպացիներ ինքնապիտական եւ մարդասիրական այդ պարտաւորութենէն։

Եւ յետոյ, մենք արթուն կեցած ենք։

Յարմար բոպէին, որ հետու չէ— չենք համարձակիր ըսելու թէ հասած է արդէն—պիտի վերանորոգենք մեր արտունջը, դարձեալ մեր խնդրանքը պիտի հասցնենք պետութեանց, պիտի յիշեցնենք անոնց թէ հաւատարմաբար հետեւած ենք իրենց խրատներուն, թէ համբերատար եղած ենք, թէ աչք գոցած ենք այն դիակներու դէզերով ներեզմանոց դարձած ամբողջ երկրի մը սարսափելի պատկերին եւ ահարկու սեսիլքին առջեւ, եւ թէ վերջապէս, ականջ խփած ենք այն վրէժխնդրութեան խօսքերուն զոր մեզ կը ներշնչէր Սանլութիւնը...։

Մարտիրոս ժողովրդի մը այս հլութենէն պիտի զգածուին անշուշտ։ Պիտի հասկնան թէ հայերը կարող ըլլալով նոր ցոյցեր պատրաստել, ձեռնպահ մնացին չիյնալու համար այն յարգանքէն զոր իրենց չնորհած է քաղաքակիրթ աշխարհը։

Արդարեւ բարբարոս գործ մը պիտի ըլլար ահակոծին ամենէի մը քմահաճոյքին յանձնել ժողովուրդներ, որոնք միայն՝ իրա՛ ու զգացում կրող վեհապետներու բարեբար իշխանութեան ներքեւ ապրող ժողովուրդներուն պէս, հանգիստ եւ մարդի ու չարժումներու անկախութեան մէջ ապրիլ կուզեն։

Արդեօք չափազանց է մեր խնդրածը։

Կրէտէի գործերով, ոտացուած բարենորոգումներով, անդամ մը ալ հասկցուեցաւ Սուլթանին կարագիրը, եւ կարելի եղաւ համոզում գոյացնել թէ ամենէն պատճառարանուած ազդարարութիւններն իսկ ջուրի ձայն կուգան իրեն, եւ թէ միայն ճնշում բանեցնելով է որ խելքը գլուխը կը բերուի։

Այս վախկոտը միայն վախցնելով կը զսպուի։

Մեզ վերաբերեալ կէտերուն մէջ ամենէն ուելի գլուխին է այն հնազանդեցնել, որովհետեւ խնդիրը ո՛չ պատերազմի վրայ է, ո՛չ թագաւորութեան մը վերահաստատման եւ ոչ այլ ինչ, այլ օրինաւոր գործի մը, մարդասիրական պարտականութեան մը կատարման վրայ։

Այս դատը այնքան արդար է, այնքան արամաբանական, հոկեբանական ու «այժմեական», որ բռնակալը ինք ալ համզուեցաւ անոր յաղթանակին. եւ այն տաեն, ստասխանութեան եւ ենդամութեան դիմելով, անիշխանականաց դէմ միջազգային համաժողովին մասնակցելու փափաք ունենալ ձեւացուց «զբաղելու համար ժէօն Թուրքերը եւ հայ յեղ. կոմիտէներու գործերը», եւ այս կերպով նմանցնելով այս վեհանձն մարդիկը Քազէրիսի եւ Ռավայոլի պէս ուտանակներու։ Իրեն բաւած էր թէ համաժողովին գայմաններէն մէկը հետեւեալը պիտի ըլլայ.

«Օտար երկիրներ ապաստանող բոլոր անիշխանականները, իրենց երկրին իշխանութեանց պիտի յանձնուին»։

Ինչ բան. ինչպէ՞ս պիտի մաքրէր իրեն յանձնուած յեղափոխականներուն հաչիր։ Բայց վերջին պատուն, Մոնշվերնի դատի քիրիկին չհանդիպցնելու համար, Մեծ-Եպարգոսը հասկցուց իրեն, հրանդի մը համար հարկաւոր զգուշութիւններով, թէ ժրնէվի սպանութեան հետեւանքով համաժողովին նկատառման ենթակայ չարագործներուն եւ իրեն հաղորդած հայրենասէրներուն միջեւ տարբերութիւն կայ, ինչ որ գոյութիւն ունի յարգուած վեհապետի մը եւ բռնակալի մը միջեւ։

Ամէն բան ուրեմն լաւ ճամբու մէջ է։ Նոյն իսկ Վիլհէլմ Բ.ի դիրկրնդխատնութիւնները օգուտ մը չունին։ Սուլթանին արիւնարբու ասպատ չելլելու վրայ է։ Բարենորոգումները պիտի ասայ մեզ. թող փոքր մը սպասեն գինքը ուելի թեթեւ ցնցումով մը։

Լաւ գործ մը կատարեալ տուած պիտի ըլլան իրեն, որմէ ինք ալ պիտի զարմանայ...։

(Լ'Ամենի) Պ. Ա.

ՁԵԿՈՒՑ

—

Հնարժուտի ընթերցողները պէտք է մի անգամ ընդ մրչտ ըմբռնեն թէ մեր պատասխանատուն բնաւ մասնակցութիւն չունի թերթը խմբագրելու գործին մէջ։ Հետեւապէս, հանրային կարծիքին առջեւ բնաւ պատասխանատու չէ ոեւէ մէկ գրուածքի ոճին կամ ոգիին համար։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

—

—Ով որ գիտէ քարակոփ (Թաշճի) Խաչիկոյի Յովհաննէս Ռափայէլեանի ուր գտնուիլը, թող փութայ իմացնել խմբագրութեանս։

——).(——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուլինա, 24 Հոկտ.

Տեղւոյս հայ գաղթականներուն թիւը 6—700ի կը յանգի, մեծ մասամբ հայաստանցի թափառականներ որոնք Դանուբի շրջանները հանքածուխ եւ յորեն փոխադրելով վարձ ապրուստ մը կը ճարեն եւ հաղիւ փոքրիկ օղնութիւն մը ընելու կարող կըլլան հայրենիքի սուրբ աղատուած իրենց դաւակներուն եւ ծնողաց։

Այժմ կառավարութիւնը սկսած է սուրբ պահանջել բոլոր գաղթականներէն. այս տուրքը ուրիշ տարիներ 5—9 ֆրանք էր, բայց այս տարի 10էն մինչեւ 20 բարձրացած է։

Թուրք հիւպատոսն ալ սկսած է ոստիկանութեան ձեռքով ամենուն անցագրերը հաւաքել։ Յայտնի չէ թէ ինչ պատճառի վերագրելի է այս հաւաքումը. ոմանք կըսեն թէ անիշխանականներ կը փնտռուին, ուրիշներ կենթադրեն թէ հասոյթի նոր աղբիւրներ ստեղծել կուզէ թուրք կառավարութիւնը... Վիլհէլմի ճանապարհորդական ծախքերուն դէմ մէկ մասը հանելու համար։

* *

Պատեհ առիթն է զուցէ յիշելու այս տեղ նորութիւն մը որուն տարածման առաքեալ հանդիսանալ կուզէ Թուլչայի Տէր Երուանդ քահանան։ Տեղէ տեղ շրջելով ամուսնութեան կը հրաւիրէ բոլոր հայասանցիները անխտիր ամուսրի թէ... ամուսնացած։

—Եկէք Թուլչա, կըսէ Տէր հայրը, ապուր աղջիկներ ունիմ, եկէք ձեզ կարգեմ առանց հարցնելու թէ ուրդեօք ինչ ունիք հայրենիքի մէջ։

Եւ երբ հայասանցիները կը բացատրեն թէ իրենք դին, ընթէ ինձ ուսներին յանձնեն, նրանք ինձ կը պատժեն եւ կաքսորեն, եթէ ուզեմ, նա կարող է ինձ միջոց տալ որ ես ազդակի արտասահման անցնեմ եւ, այդ անում է ինձ շատ համակրելով ու ապացուցանելու համար, որ Թուրք կառավարութիւնը այդքան էլ վատ կառավարութիւն չէ, որքան էլ ուզում են ցոյց տալ նրա թշնամիները, եւ յոյս ունի որ ես երախտագէտ կը լինեմ։

Ես պատասխանեցի որ գիտեմ թէ ուսները ինձ կը պատժեն, նրա տրած օգնութիւնը չեմ էլ մերժի բայց այսպիսի պայմաններում, դեռ կը մտածեմ այդ մասին, որովհետեւ ես մաքուր մտել եմ այս գործին մէջ եւ մաքուր էլ դուրս կը գամ, այլ լաւ իմացէք։

Մտածելով որ Նազիմը ուզում է ինձ հետ մի խաղ խաղալ, կամ իրան ձեռքում գործիք դարձնել, կամ բոլորովին լարել իմ յարաբերութիւնները ռուս կառավարութեան հետ, բանս վերադառնալուց յետոյ՝ խնդրեցի մարդ ուղարկեցի Մաքսիմովի եան, կանչեցի եւ յայտնեցի Նազիմի հետ ունեցած խօսակցութիւնը։

Մաքսիմովը ժպտաց։

(Շարունակելի)

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (45)

Արփիարն էլ բանից դուրս եկաւ. մենք մնում էինք, մեր դատը պէտք է շարունակվէր, բայց ուշանում էր. արդէն մարը անցնում էր, ձանձրանալի էր դառնում, մտածում էինք գոնէ շուտ անեն, ինչ վճիռ ուզում են տան։ Անորոշ վիճակում, բանտի մէջ, կեանքը անտանելի է դառնում փոքր ի շատէ զգայուն եւ ապրելու եռանդ եւ ընկերական կեանք վարելու ձգտումներ ունեցող մարդու համար։

Մի օր էլ նորից գնացի Նազիմի մօտ որ հասկնամ թէ վերջապէս ե՞րբ է վերջանալու մեր դատը։

Հէնց որ մտայ Նազիմի ընդունարանը, տեսայ որ նա նստած է գրասեղանի դիմացը. նրա մօտ չոր ու ցամաք եւ բարձրահասակ, նիհար եւ նուրբ դիմագծերով, փոքր ինչ տիարացուկան մազերով մի հայ. իսկ իմ կողմից դրասեղանի դիմացը կանգնած է փոքրիկ Արմենակը, Խաչիկին սպանողը։

Նազիմը տեղիցը վեր կացաւ, ինձ էլ աթոռ առաջարկեց եւ ներկայացրեց անծանօթ պարոնին։

Դա Աղդ. Երեսփոխան Սուրէնեանը էր, երբեմն Թաղիկի խմբագիր. ինքը ինձ յայտարարեց այդ բոլորը։ Նազիմը նրա հետ շատ մօտիկ էր երեւում, բայց Արմենակի այնտեղ գտնվելը ինձ զարմացրեց. ես գիտէի որ Արմենակը գտնվում էր բանտի այն բաժնում, ուր էր եւ Մարիմեանը։ Եկայ թէ չէ զարմացած հարցրի. ինչո՞ւ էք սրան այստեղ բերել. գիտէի որ Սուրէնեանը բոլորովին լաւ մարդ չէր. մտքովս անցաւ որ բերել են կամ Մարիմեանի մասին տեղեկութիւններ դուրս կորզելու կամ թէ Վ. Դատեանի մասին։ Նազիմը մի կցկտուր պատասխան տալով՝ խնդրեց Արմենակին դուրս ուղարկեց։ Մնացինք երեքով։ Նազիմը ինչ որ թուզթ սկսեց կարդալ. իսկ Աղդ. Երեսփոխանը հայերէն ինձ ասաց.

—Շատ ուրախ եմ որ ձեզի պէս անձնուէր հայու մը հետ ծանօթացայ։

Այդտեղ արդէն բոլորովին զզվեցի. բայց ոչինչ չասացի։ Ցեռոյ չարունակեց.

—Ես ալ լաւ հայ եմ. Թաղիկի խմբագիր եւ Աղդ. Երեսփոխան։ Ինչպէս կը կարծէք. մեր յեղափոխութիւնը կը չարունակուի՞ թէ մարեցաւ...։

Այլ ես համբերել չը կարողացայ, եւ ասացի.

—Պարոն, դուք լաւ հայ չէք երեւում. եթէ լաւ հայ լինէիք, Նազիմը ձեզ թոյլ չէր տալ ինձ հետ հայերէն խօսելու. քանի որ իմ փաստաբանիս եւ հայերէն գիտցող ոստիկաններին անգամ թոյլ չեն տալիս։ Եւ ո՛չ էլ լաւ գիպլօմատէք, որ ինձ այդպիսի հարցեր էք տալիս. դուցէ Արմենակին էք կարծում ինձ. այդ ձեր կողմից վատութիւն է եւ միամտութիւն։

Վերջին խօսքերը բարկանալով ասացի։ Նազիմը այդ նկատեց եւ Սուրէնեանին հարցրեց՝ թէ ես ի՞նչ ասի։ Սուրէնեանը մի բոլորովին ուրիշ բան ասաց, չուզելով խայտառակվել փաշայի առջեւ։ Ես ընհատեցի նրա խօսքը եւ Նազիմին յայտնեցի իմ ասածը, աւելցնելով որ՝ այս պարոնը վատ հայ է։ Նազիմը տեսնելով իմ զզվանքը եւ բարկութիւնը կամացուկ Պ. ազգային սահմանադրական եւ եսփոխանին դուրս ուղարկեց։

Այդ օրը Նազիմը ուելի անուշ էր։ Նա հաղորդեց որ Սուլթանը բոլոր հայերին էլ ներելու է, նրանց թվում եւ ինձ։ Եւ ինքը համոզված լինելով որ մարդիկ Քազէրիսի եւ Ռավայոլի պէս ուտանակներու։ Իրեն բաւած էր թէ համաժողովին գայմաններէն մէկը հետեւեալը պիտի ըլլայ.

«Օտար երկիրներ ապաստանող բոլոր անիշխանականները, իրենց երկրին իշխանութեանց պիտի յանձնուին»։

Ինչ բան. ինչպէ՞ս պիտի մաքրէր իրեն յանձնուած յեղափոխականներուն հաչիր։ Բայց վերջին պատուն, Մոնշվերնի դատի քիրիկին չհանդիպցնելու համար, Մեծ-Եպարգոսը հասկցուց իրեն, հրանդի մը համար հարկաւոր զգուշութիւններով, թէ ժրնէվի սպանութեան հետեւանքով համաժողովին նկատառման ենթակայ չարագործներուն եւ իրեն հաղորդած հայրենասէրներուն միջեւ տարբերութիւն կայ, ինչ որ գոյութիւն ունի յարգուած վեհապետի մը եւ բռնակալի մը միջեւ։

Ամէն բան ուրեմն լաւ ճամբու մէջ է։ Նոյն իսկ Վիլհէլմ Բ.ի դիրկրնդխատնութիւնները օգուտ մը չունին։ Սուլթանին արիւնարբու ասպատ չելլելու վրայ է։ Բարենորոգումները պիտի ասայ մեզ. թող փութայ իմացնել խմբագրութեանս։

——).(——

ԶԵԿՈՒՑ

—

Հնարժուտի ընթերցողները պէտք է մի անգամ ընդ մրչտ ըմբռնեն թէ մեր պատասխանատուն բնաւ մասնակցութիւն չունի թերթը խմբագրելու գործին մէջ։ Հետեւապէս, հանրային կարծիքին առջեւ բնաւ պատասխանատու չէ ոեւէ մէկ գրուածքի ոճին կամ ոգիին համար։

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

—

—Ով որ գիտէ քարակոփ (Թաշճի) Խաչիկոյի Յովհաննէս Ռափայէլեանի ուր գտնուիլը, թող փութայ իմացնել խմբագրութեանս։

——).(——

ցանիք և զաւակներ ունին հայրենիքի մէջ, Թշուառութեան և սուրի մատնուած՝ Տէր հայրը կառարկէ.

—Ձանրմ, ձգէցէք այդպիսի խօսքեր հիմա քանի որ Հայաստան չկայ, կարգուեցէք և զաւակ ճայեցէք. երբ հայրենիքը մեղի եղաւ, ասոնք կը ձգէք կերթաք...»

Կարելի՞ է աւելի ճիւապային անբարոյականութեամբ լեցուն ուրիշ խօսքեր լսել եկեղեցականի մը բերնէն։

Հ.

Թաւրիզ, 20 Սեպտ.

Գիւղացիները Սալմաստում

Շատերին յայտնի է, որ Պարսկաստանում ժողովուրդը հողատէր չէ, գիւղացին իրա սեփական հողը չունի, գիւղեր ու մինչև իսկ քաղաքներ իսմբ խումբ յանձնված են և կապալի տրված խաներին, մատնաւոր անհատներին։ Հողագործը, գիւղացին, լինի պարսիկ թէ հայ, անտանելի նեղութիւններ է կրում գիւղատէրի կողմից, հարստահարում և տանջում։

Սալմաստում Սուրա գիւղում խառն բնակում են հայ և պարսիկ, գիւղատէրն է Մաշատ Թաղի անուն մի պարսիկ, որը գիւղացիներին շատ նեղում է և չափազանց հարստահարում։ Ղժգոհ և չարչարված ժողովուրդը քանիցս բողոքներ է մատուցել կառավարութեան, չատ դրամ է վատնում ազատուելու համար այդ կեղեքիչ գիւղատէրից. սակայն կառավարութիւնը միշտ պաշտպանել է գիւղատէրին, ինչպէս միշտ և առհասարակ բոլոր գիւղատէրներին, որովհետև կառավարութեան բոլոր պաշտօնեաները հէնց իրանք ամենքն ալ գիւղատէր են։ Ժողովուրդը իրան բացարձակ իրաւունքներից զրկուած է, բողոքը անլսելի է մնում, և յուսահատ մատնում է իրա գանգին...։

Վերջերս պարսիկ և հայ ժողովուրդը վերին աստիճանի զրգռված և յուսահատ գիտում է Ռուսաստան և այնտեղից երկար հեռագիրներով բողոքում Շահին։ Միւս կողմից Սալմաստի առաջնորդը Խաչիկ վր. Դատեան գիտումներ է անում կառավարութեան և Ատրպատականի առաջնորդութեան։

Ատրպատականի առաջնորդը աշխատում է մի կերպով Մաշատ Թաղիի ձեռքից հանել գիւղը և գնել գաղթականների օգտին։ Այս միջոցին մեր հանրաձանօթ ռուսաց թաղիր բաշին միջամտում է և ուզում մի կերպ առաջնորդը հաշտեցնել Մաշատ Թաղիի հետ, այս վերջինից մի քանի հարիւր թուման կաշառք ստանալն ապաւնվելուց յետոյ...։

Առաջնորդը բաւականին ծանօթ լինելով Թաղիր բաշու խաղերին և էնտրիկներին, նրա խօսքերին ուշադրութիւն չէ դարձնում և իրա գործը է շարունակում ուղղակի կառավարութեան հետ յարաբերութեան մտնելով։ Առաջնորդին յաջողվում է Ամիր Նիզամից ստանալ մի պաշտօնական հեռագիր, որի այժով Սուրա գիւղը առնվում է Մաշատ Թաղու ձեռքից և վաճառվում գիւղացիներին, կամ լաւ ասենք յանձնվում է առաջնորդի անօրինութեան։

Առաջնորդ սրբազանը անձամբ այդ հեռագիրը ուղարկում է Սալմաստի առաջնորդի միջոցով գաւառի գաւառապետին, որը խոսքն գործադրում է Մաշատ Թաղու մարդկանցը գիւղից հեռացնելով։

Սակայն միւս կողմից Մաշատ Թաղի իրա փողի ոյժով մի քանի օրից յետոյ Թէհրանից հրաման է բերել տալիս, կրկին գիւղը լրան վերադարձնելու պայմանով։ ։ ։

Պարզկասանում չատ սովորական է երկու հակառակող կողմերին տալ իրար հակասող պաշտօնական հրամաններ և տրտունջներ...։

Այժմ սրբազանը աշխատում է մի վերջնական և վճռական հրաման ձեռք բերել յօգուտ գիւղացիներին։

Տեսնենք այդ կ'յաջողվի սրբազանին...։

ՄԻՐՋԱ.

«ՕՍՄԱՆԸ»

Ժէնէվի Ժէօն Թուրքերուն օրգան Օսմանը՝ հետեւեալ քիչ չատ պատուոյ յայտարարութիւնը կը հրատարակէ. «Կառավարութիւնը որքան ալ վատթարանայ և դաւաճանէ, դուք ջանքերնիդ, ընթացքնիդ ցոյց տուէք, որովհետև հիւանդութիւնը տարափոխիկ է։ Այսօր եթէ Կրէտէի խլամ ժողովուրդը լմցնէ, վաղը մեր թագաւորութեան միւս մէկ կողմը պիտի ճարակի։ Օգնութի՛ւն օգնութիւն, ո՛վ հաւատացեալներ, ո՛վ հայրենակիցներ, հասէ՛ք մեր ողբուկոծին. մեր աղերսը, մեր օգնութեան կանչելը մինակ օսմանցիներուն, իսլամ օսմանցիներուն չուղղուիր, հապա նաեւ հիւսիսէն հարաւ, եւ արեւելքէն արեւմուտք ամէն կառավարութեանց իշխանութեան տակ գտնուող բոլոր իսլամ եղբայրներուն, որովհետեւ խնդիրը մեծ է, տարածուն է. Միջերկրականի խնդիր է. Սալֆայութեան եւ Թագի խնդիր է։

Էյ օսմանցիներ, էյ իսլամներ... հասէք, վերջին ճիգերնիդ, վերջին պարտքերնիդ ցոյց տուէք. ձեր բոնելիք ճիգին մէջ ուղեցոյց բռնեցէք ձեր ազգութիւնը, ձեր այժանիքը։

Ջանքի ասպարէզը Կրէտէի հողը չէ. երկրագնդի ամէն կողմն է ուր կը գտնուիք. ձի՛գ տեսնենք, ով հայրենակիցներ»...

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)·(—

Առաւօտեան մութն ու յուսին՝ երբ թռչնոց հոյլերը իրենց ծուարած տեղերէն դուրս դալով, նորաբողբոջ թուփերի մէջէն իրենց առաջին գեղգեղանքը կը սկսէին, Պոլոյ Նարեկացիի կաշնակը, իր դղրդալից կոչովը մեղ եկեղեցի կը հրաւիրէ։ Բայց մենք, սրտի ու մտքի կատարեալ առողջութեամբ աչքերնիս բանալով, անկուշտ ու զմայլած կը դիտենք մեր շուրջը պատող երեւոյթը. կը շնչենք սրտի մեղմ արտ ուսմամբ առաւօտեան զեփիւռը, ու ներշնչուած բուրող ծաղիկներու ու անուշահոտ վարդերի անմահական հոտերէն՝ կուշտանք երթալ եկեղեցի, ուր Աթանա. հայր սուրբը, Նարեկացիի փառաւոր տաճարին դիմաց՝ ծերուկ դրակալի մը առջեւ կայնած՝ իւղով պրկուած, մուխով ներծծած ու մնաց ժամադրքի մը վրայէն «Լցար աստուծու ողորմութեամբ ու ցնծացուք և ուրախ լեր զամենայն աւուրս կենաց մերոց» յատենական աղմոսը սկսած էր երգել։ Այս նուիրական տաճարի հոյակապ կամարներուն տակ, սրտի ու մտքի մօտիկ պատմական յիշատակներով լի հայրենիքի այդ եղէմական խորշին մէջը, առաւօտեան այդպիսի աննկարագրելի ժամու մը մայրենի լեզուաւ, պարզ ու անսեթեւեթ երգել ու աղօթելը աղդային ամենատաք ջերմեռանդութեան շունչն ունի. ու մարդ որքան սկեպտիկ մը ալ լինի, հոգին մէջ այդ պահուն տեսակ մը յուզում ու մտքի անխուսափելի յափշտակում մը կունենայ, որ աղօթքի ամենէն վսեմ ու մտնջների ամենէն սրտաբուխն է...։

Երանուէտ յափշտակութեան մը հոգեկան ամենէն քաղցր երանութիւնէն է որ հայր սուրբին «Օրհնեալ եղերուքդ կը սթափցնէ զմեզ։ Կը փութանք ժամատաց վարդապետի աչն համբուրելէ ետք, ներքնատաճարը մտնել ու անգիմագրելի հեռաքրքրութիւնով մը հետազօտել այն նշանախեցները որոնք հնութեան ու անցեալի հետք մը ունին։ Կը տեսնենք եկեղեցիի որմերի վրայ փորագրուած զանազան անձանց յիշատակին խաչեր, որոնք 4.5 դարի տարէցութիւն ունին, կը քննենք վէմքարի վրայ դրուածը որ ժամանակի մաշիչ ընթացքին հետ անընթեռնելի դարձած է։ Ներքնատաճարէն դուրս, մեծ դռնթի դրան առընթեր սպիտակ մարմարիոնի ներքեւի դամբարանին կը մօտենանք ամփոփ ուշադրութիւնով մը կընդօրինակենք այդ դամբանագիրը որ կրօնի ու ազգի համար անձնուէր հովիւի մը վեցդարեան յիշատակարանն էր։ Ու այդ ամէն կենդանի յիշատակներով ու տաք մտածումներով լցած՝ դուրս կը ելնենք տաճարէն ու վանքի մեծ դուռնեն, և Աթանաս հայր սուրբին ու գիւղի մէկ երկու իշխանների ու ծանօթների հետ կը դիմենք վանքի արեւելակողմը, ուռենիներով, նեռենիներով ուղղանկան տունկերով պճնուած ձորակէն բիսող կամնաղբիւրը՝ որուն շուրջ բուսած գալարների ու սօսուն և դինարբուկ ծաղիկների մէջ արդէն մեզ կանխապէս տեղ պատրաստելով՝ կամնաղբիւրի կամնահամ ջրով լեցնելու հեշտանքը առուան փչող կենսաբեր սիւքին հետ բարկաճայթ եռ կուգար։

ՆԱՀԱ–ՊԵՏ

(Շարունակելի)

Կը խնդրուի մեղմէ ծանուցանել թէ դրաշարի յանկարծական հիւանդութեան պատճառով «Իրաւունք» թերթը չպիտի հրատարակուի այսօր։

——)(——

ՔՐՈՆԻԿ

—)·(—

Կաթողիկոսը օրհնութեան և գոհունակութեան կոնդակներ յղեր է Ախալքալաքցի Պ. Ալէքսի Սանդոյեանցի և Պ. Նիկողայոս Իզմիրլեանի անուններուն։ Առաջինը 800 բուպլի նուիրած է Երուսաղէմի վանքին, և երկրորդը 10,000 բուպլի յատկացուցած է երկու աղքատիկ ուսանողներու դատարակութեան համար։

—Ռուսոսմոյի առաջնորդ Տ. Յովսէփ Թ. Վ. Այվազեան մօտերս էջմիածին պիտի երթայ եպիսկոպոսանալու։

—Աղդ. Հիւանդանոցի Հոդաբարձութիւնը Լօթը հոդիէ բաղկացած Տիկնանց խնամակալութիւն մը կազմեր է։ Այս տիկինները մօտերս գործի պիտի ձեռնարկեն, քիչ մը աւելի խնամք և փափկութիւն առաջ բերելու համար ատ ոպեալներու այդ ապաստարանին մէջ։

—Ասկէց առաջ, հիւանդանոցին նպաստ մը ընելու համար, Պոլսոյ բարեկեցիկ ընտանիքներու մէջ դանձանակներ հաստատուած էին։ Անցեալ Հինգշաբթի օր այդ դանձանակներէն հարիւր տասը հատը բացուելով, ստուգուեր է թէ տասը հազար դրուշէ աւելի գումար մը դոյացեր է։

—Կրօն. ժողովի որոշումով, Սուրբ Պլաք հրէուհին ալ Անժէլ անուն հրէուհիին հետ պիտի մկրտուի Հիւանդանոցի մատրան մէջ։

—Հայ-հռոմէական Պատրիարքարանը արտօնութիւն ստացեր է եկեղեցի մը շինելու որոշեալ գետնի մը վրայ, Ուլնիոյ մէջ։

—Տիզիսի Նոր-Դար լրագիրը ազդարարութիւն ընդուներ է ռուսական դրաքննութենէն, իբր «խիստ պահպանողական» Մայրաթոռի և հայ եկեղեցիի վրայ իր հրատարակութեանց մէջ, խափանեալ «Արձագանքի» նման։

—Փաստաբան Սուրէնեան էֆ. Ն. իր պոյքարը կը շարունակէ Գրիգոր Գարակէօզեանի դէմ։ Այս վերջինը որ երկու անդամ հրաւէր ստացած էր Շէրիի դատարանը ներկայանալու, հիմակ ալ պաշտօնական կոչնագիր ընդուներ է։

—Էջմիածնէն կը գրեն թէ ազգատներու ուսեալ, հաղուստ և պատապարան տալու համար, Սինոդի ձեռքով հայթայթուած և բաշխուած նպաստի գումարը յանգած է 30 հազար ռուբլի։

—Անցեալ ուրբաթ, տարճանակով մենամարտ մը տեղի ունեցաւ Վիեննի Աւստրիական հիւպատոս Պ. Բիրոյի Զաթմարիի և «Արօտէն Լիտա» լրագրին տնօրէն Պ. Զանովի միջև, այս վերջինին հրատարակած մէկ երկտողին համար, որուն մէջ ըսուած էր թէ հիւպատոսը որսի կերթայ տարուան այն եղանակին երբ

որսորդութիւնը արգիլուած է։ Պ. Զաթմարիի գնդակը վրիպեր է. իսկ հակառակորդը օդին մէջ պարպեր է իր հրաշէնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ԿՐԷՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Հիանալի տեսարան մը կը պարզուի՝ դեռ քանի մը օր առաջ սուրի և աւերումի մատնուած կղզիին մէջ։ Թուրք զինուորները հետզհետէ դուրս կը հանուին. հետեւակ, թնդանօթակիր, ռազմիկոնութիւն, քաղաքային պաշտօնէութիւն, վերջապէս ամէն բան։ Իսկ անոնք որ տակաւին կը տատամսին, եւրոպական զինուորներու հսկողութեան տակ շոգենաւ կը դրուին ճշմարիտ չարագործներու պէս։

Կրէտացիները չունչ կառնեն։ Վերջնականապէս փակուեցաւ իրենց համար արիւնալի դարերու շարքը։ Ամենէն ըմբոստ ապստամբները իսկ իրենց զէնքերը յանձնած են եւրոպական իշխանութեանց, ի նշան իրենց երախտագիտութեան, այս վերջիններուն ցոյց տուած կորովին համար։

Թուրք կառավարութիւնը ծայրայեղ գրգռումի մէջ է. ինչ որ ի հարկէ բնաւ օգուտ չունի Արշիպէլագոսի այդ գոհարին իրեն վերադարձուելու խնդրին մէջ։ Ցայտնի է թէ Ռուսիոյ առաջարկութիւններով և եւրոպական տերութիւններու հաւանութեամբ, Կէորկիոս իշխանը Կրէտէի առժամանակեայ կամ լաւ ևս վերջնական կառավարիչ որոշուած է։ Դուռը ամէն միջոց ի գործ դրաւ այս ընտրութիւնը վրիպեցնելու համար. բայց հիմայ համակերպած է։

Վերջին հեռագիրը կը ծանուցանէ թէ Սուլթանը Կէորկիոսի ընտրելիութիւնը ընդուներ է իբրեւ Կրէտէի վալի։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Ծանուցինք արդէն թէ հաշտութեան յանձնաժողովին ամերիկեան պատուիրակները, յանկարծ այնպիսի պահանջում մը ըրին, որ ամէն օր սկսաւ մտածել թէ մի գուցէ նորէն պատերազմը արծարծի երկու պետութիւններուն մէջ։

Պ. Մաք Քինլիի հրահանգին համեմատ, պատուիրակները պահանջեցին որ Փիլիպպէններու ամբողջ արշիպէղագոսը Մ. Նահանգաց թողուի։ Արդարեւ, իր վերջին ճանապարհորդութեան մէջ, Նախագահը երկրին այլ և այլ կողմերը այցելելով, սա համոզումը գոյացուցած է թէ ամերիկեան հանրային կարծիքը այդ հողային գրաւման կուսակից է։

Եւ սակայն Ամերիկայի մէջ ուրիշ կուսակցութիւն մըն ալ կայ, որ խստիւ կը բողոքէ այն գաղափարին դէմ, որ կը ձգտի, անկախութեան սկզբունքին վրայ հաստատուած հանրապետութիւն մը՝ նիւթական բիրտ ուժին վրայ հիմնուած ստոր իշխանութեան մը վերածել։

Սպանիան որ գիտէ թէ Լրոպայի այս շփոթ կացութեան մէջ անկէց օգնութիւն կամ աղդեցիկ միջամտութիւն մը սպասելը սին երազ մըն է, յոյսը ամենէն շատ դրած է այս կուսակցութեան վրայ, և իր որոշումները կը ձգձգէ, յուսալով որ այս վեհանձն ազատամիտները կրնան կառավարութեան գլուխը անցնիլ յառաջիկայ մօտալուտ ընտրութեանց մէջ, և ամերիկեան պահանջումները չափաւորել։

ԱՆԳԼԻԱ

Թէ և որոշ չափով Անգլիա գոհացում ստացաւ Ֆաշօտայի խնդրին մէջ, և սակայն իր պատերազմական պատրաստութիւնները առաջ տանելէ չդադրիր։ Շատ մը գաւառներու, Տուվրի, Կասբօռի և Բօրթմուտի մէջ միջոցներ ձեռք առնուած են, պահեստի զինուորները և կամաւորները շարժման մէջ դնելու համար։ «Թայմըզ» կըսէ թէ այս պատրաստութիւնները պատահականութիւններու դէմ տալու համար են։

Գերմանական կարեւոր թերթ մը կարծիք կը յայտնէ թէ Անգլիոյ պատրաստութիւնները Ռուսիոյ դէմ ուղղուած են Զիւ-Շուանկի դրամն պատճառով։

Պէտք է ընդունիլ նաեւ թէ Ֆաշօտայի խնդրին մէջ Ֆրանսայի պարտութիւնը, վերջին ատենի ցրտութիւն առաջ բերած է երկուերկիրներուն մէջ։ Ֆրանսա, որ անխոհեմութիւն համարեց Ֆաշօտայի պէս աննշան խորշի մը համար պատերազմի դուռ բանալ, ի հարկէ իր արժանապատուութեան վրէժը լուծելու առիթը չպիտի փախցնէ ուրիշ ճամբայներով, օրինակի համար Եգիպտոսի խնդիրը արծարծելով. դժուարութիւններ յարուցանելու անգլիական կառավարութեան դէմ։ Եւ այս կարգի մտածումներն են անշուշտ որ Անգլիոյ կը թելադրեն միշտ կազմ և պատրաստ գտնուելու։

ԽՅՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Բէթերսպուրկէ կիմացուցեն թէ զէնքնկեցութեան դեսպան-խորհրդին ծրագրին հիմնական մասերը արդէն որոշուած են կոմս Մուրավիէվի և Զարին գործակցութեամբ։

Այդ կէտերը պաշտօնապէս պիտի հաղորդուին պետութեանց, ներկայ ամսոյ տասնեւհինգին։

—Օտարահպատակ ճանապարհորդներուն վրայ թուրք իշխանութեանց դրած ճնշումները օրէ օր կը շեշտուին։ Հիւպատոսական անցագիրը չբաւեր երկրին մէջ մէկ տեղէ ուրիշ տեղ երթալու համար. ճամբորդները պարտաւոր են «եօլ թէսքէրէսի» մըն ալ հանել իրենց համար։ Գլխաւորաբար միսիոնարները և վաճառականները շատ կը նեղուին այս խստութիւններէն։ Հիւպատոսարանները կը պարտաւորին ամէն օր միջամտութիւններ ընելու։

—Կ. Պոլսոյ սերպական դեսպանը կծու ծանուցագիր մը ուղղեր է Դրան։ Այս ընդարձակ գրութիւնը, Քոսովոյի վիլայէթին մէջ սերպերու վիճակը կը պարզէ և կը մերժէ թրքական այն պնդումները թէ Սերպիոյ դաղաթները անհիմն ըլլան։ Իբր եզրակացութիւն, ծանուցագիրը՝ Քոսովոյի սերպերու կացութիւնը ալպանեացիներու մէջ տեղ, կը նմանցնէ այն կացութեան զոր ունին քրդերէ շրջապատուած հայերը։ Եւ կէս առ կէս քրիստոնեայ ու իսլամ անդամներէ ու սերպ պատուիրակներէ բաղկացած յանձնաժողովի մը կազմութիւնը կը խնդրէ։ Եթէ Դուռը անաչառ քննութիւն մը բանալ մերժէ, սերպ և թրքական յարաբերութիւնները վտանգի մէջ են։

—Ֆրանսայի և Սպանիոյ մէջ հանրածանօթ անիշխանական մը, Սղեքսանդրիոյ մէջ ձերբակալուեցաւ անցեալ ամսոյ 24ին, Մալթայէն հասնող նաւու մը մէջ։ Այս անիշխանականը Իտալիէն կուգար և միտք ունէր Սղեքսանդրիայէն Պալեստին անցնիլ։

—Մարեշալ Տէլի Ֆուտթ փաշա, որ Պոլսոյ վերջին չարգերուն առեն, իր ապարանքին մէջ բաղմաթիւ հայերու ապաստարան տուած ըլլալուն համար պալատան աչքէն ինկած էր, Վիլհէլմի վերջին ուղեւորութեան առեն բոլորովին աննշմարելի անցաւ։ Ասոր վրայ, Տէլի Ֆուտա ապստիկ զայրանալով, Երլոբզ քէօշկի մէջ Օսման փաշային ներկայացեր և անցագիր պահանջեր է Թուրքիոյ սահմաններէն հեռանալու համար։ Մարեշալը խնդրեր է նաև որ ետ առնուի իր յաղթական սուրը։

Վեհանձն Մարեշալը, չարդերու պահուն, այս բառերով սպառնացած էր փախստական հայերը մինչեւ իր տանը մէջ հալածող մարդասպաններուն։

«Եթէ դուք ձեռք դպցնէք իմ հիւրերէս նոյն իսկ մէկուն, քար քարի վրայ չեմ թողուր Ստամպոլի մէջ, յիշեցէք որ ես չէրքէզ եմ և իմ հիւրս անձեռնմխելի է....»

—Անգլիական մամուլը շատ գժգոհ է այն ջերմագին ընդունելութենէն զոր Վիլհէլմ կայսրը գտաւ Կ. Պոլսոյ մէջ։

Տէյլի Քրոնիքլ և Տէյլի Նիւս օրաթերթերը տարօրինակ բան մը կը համարին, որ քրիստոնեայ վեհապետ մը եղբայրակցի Սուլթանին հետ, ճիշտ այն ժամանակ, երբ հայոց նոր կոտորածներ կը պատահին։ Քրոնիքլ այդ բանը «Համաշխարհային պատմութեան ամենէն մեծ դայթակղութիւնը» կը նկատէ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ"Ի

Կը տպագրուին ամէն լեղուէ այցելումս, հասցէտումս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիներն յոյժ դիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՊՕՐՍԱ

Վառնա 28 Հոկտեմբեր

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 9—9.60 ֆրանք

Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 5.80—6.20 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 5.80—6

Առապա, 55—60 լիպրա, 6—6.20

Կիւնկէ 8—10 վակօն, 25—30 առապա կէլմէքաէ տիր։

ԵՈՒԼԱՖ

Կիւնաէ 20—25 արապա կէլմէքաէ տիր 5.40—5.70 ֆրանք

ՀԱՐԸ

Կիւնաէ 5—6 արապա կէլմէքաէ տիր։ 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԷՍ

Կիւնաէ 5—6 առապա կէլմէքաէ տիր 100 օզգասը 18—21 ֆր. մալա կէօրկ։

Առապա մուամէլէսի՝ Նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր։

Կիւնաէ 25—30 վակօն, 100—120 արապա պուղտայ, 20—25 արապա արբա կէլմէքաէ տիր։

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՑ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)(Գին 1 Ֆրանք)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Փիլիպէ Տ. Անտոն Կոչի մօտ. Ռուսչուք՝ Հայկ Մալխանեանի սրճարանը, Սոֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով։

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՋ-ԳԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ՎԱՂԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ՝ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ

Գին 1 ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը։

Печатница „Взаимность". Варна